7 (89). ԹԱՔԱՎՈՐՆ ՈՒ ՈՍԿԵՐՉԻՆ

Թաքավորին մեկն օր թրպտիր կէնե, կը պրտրտի փողոցին մէջ, մե ոսկերչիմ ըռաստ քուքա։ Էդ թաքավորը լըլին կըսե թե.— Այսի ոսկերչին լավ ըռաստ էկավ, մե մատնում ակըմ տամ թող ինձի մատնի շինե, օր տեսնողն ըսե օր լավ մատնի ունի թաքավորը։

Ակը տի թներ մատնուն։ Ոսկերչուն հետ մե յավուդիմ կար. էրկուսին խանթընին կուշտ-կշտի են։ Յավուդին կտոր կը ծախե, քուքա էդ ոսկերչուն քովը դրուց կէնեն։ Ոսկերչին ինչ գործի օր կը շիտկվի՝ «Քրիստոս տեր» կըսե, առանց էդ ըսելու բան չի էնե։ Ոսկերչին Քրիստոսի թըրկը չի տա։

Գործին օր կը նստի, յավուդին տեսել էր, օր մատնուն ակը թաքավորը տվել էր ոսկերչուն օր մատնիմ շիներ, օր էդ ակը մատնուն վրա թներ։ Էդ ոսկերչին ցորեկ ճաշին տուն քուքա, ղանդրնին վրա կը քաշե, դուռը չի կողպե։ Յավուդին դըրըկը դուս կը քաշե, ակը կառնե, տանի ցկե կը ծովը, կըսե.— «Միշտ էս մարթը Քրիստոսին անունը կուտա, աշենք էսիկ օր ծովը ցկեմ, Քրիստոսը էդոր ի՞նչ օգուտ տի տա»։

Ոսկերչին թաքավորեն խնդրվի կը թե.— Ինձի միջոց տու։ Ես իրեք հոքեցե բեհ եմ առե, մեկին անկչի օղ պիտի շինեմ, մեկին է՝ մատնի, մեկին է՝ օսկի բիլըզիկ։ Ինձի միջոց տուր օր իրեն ժամանակին տամ։

Թաքավորը կըսե.— Ամոթ չէ օր քեզի խանգարեմ, թող տասը օր է իմըս էտև ըլի։

Հիմի էդ ոսկերչին պատահի կը օր կէրթա փողոցը՝ միս, պրադուխտ կը փերե տանը համար։ Ղասպընոցը կայե օր միս չկա։

Դառնա փոր փոշման տուն քնալու օր կըլլի, մե ձուկ ծախողըմ կը պատահի։

Կըսե.— Ծախե՞ս կը։

Կըսե.— Հա՛։

Բազար կէնե, ձկները կառնե տանի կը. կըսե. «Մսին տեղը էսով անցանենք օրը»։ Կառնե ձկները տուն կը փերե։

Կնկանը կսե.— Միս չկար, էսիկ էփե, հ'էսօր էսով անցանինք։ Ինքը կելլե քուքա ոսկերչի գործին։

Ցորեկ ճաշին միջոցին տուն կէրթա, կըսե.— Կնիկ, ճաշ պատրաստե՞լ ես, ձկները էփե՞լ ես։

Կնիկը ձկները կը փերե սեղանի վրա։ Կըսե.— Ա՛յ մարթ, այսի փերած ձկներդ օր փերիր, այսի ձուկը գանկով ճեղքեցի, այսի անգին քարը ձկին փորեն հ'ելավ։

Ոսկերչին կայե օր թաքավորին տված մատնու ակն է։ Մտածե կը օր՝ «Կնիկը խանութ է քնացե գողցել է, ինձի խափե կը, թե ձկին փորեն հ'ելավ»։

Կըսե.— Կնիկ, էսիկ ձկին փորի բան չէ։

Կնիկը կըսե.— Չէ, ձկին փորեն է։

Ոսկերչին կելլե քուքա կաշե օր անգին քարը դըրըկին մեչ չկա, մտածե կը օր կնիկն է գողցե։

Կնիկը կըսե.— Ա՛յ մարթ, ես քու խանութդ ոտք չեմ կոխե, ձկին փորեն է, հավատա։

Ոսկերչին կնկանը վրա կը թնե, մատնուն ակը ձուկն էր կուլ տվե։ Քրիստոսին անունը բերնին մարթու խոսքը կատարվի կը, արթարը հաղթե կը։